Vahram Hovyan

To cite this version:

Vahram Hovyan. . International academic conference “The Armenian diaspora in the Russian Federation ”, Oct 2016, Yerevan, Armenia. pp.341-356. hal-03371769v2

HAL Id: hal-03371769

https://hal.science/hal-03371769v2

Submitted on 21 Jun 2022

HAL is a multi-disciplinary open access archive for the deposit and dissemination of scientific research documents, whether they are published or not. The documents may come from teaching and research institutions in France or abroad, or from public or private research centers.

L’archive ouverte pluridisciplinaire **HAL**, est destinée au dépôt et à la diffusion de documents scientifiques de niveau recherche, publiés ou non, émanant des établissements d’enseignement et de recherche français ou étrangers, des laboratoires publics ou privés.

НАУЧНЫЙ ПОТЕНЦИАЛ АРМЯНСКОЙ ОБЩИНЫ РОССИИ В ГУМАНИТАРНОЙ ОБЛАСТИ

Ваграм Овян (РА)

Научный потенциал армянской общины России, как в случае всей Диаспоры, разделяется на два уровня: индивидуальный и институциональный. Индивидуальный уровень составляют отдельные специалисты армянской национальности, действующие в разных научно-образовательных учреждениях, «мозговых центрах», медиа сфере РФ. Коллективно они именуются как научно-экспертное сообщество. Институционаьный уровень составяют Армянские научно-образовательные учреждения (например, университетские центры), аналитические и медиа структуры, которые коллективно именуются как арменоведческие центры. Среди армянских специаистов РФ в сфере гуманитарных наук превалируют такие специальности как экономика, история, философия, филология, правоведение, психология, политология. Кроме этих, есть и представители социологии, культурологии, религиоведения. В РФ есть также такие специалисты армянской национальности, которые имеют образование в сфере естественных наук (инженерия, физико-математические науки, география, геология и т. д.), однако действуют в аналитических структурах политического направления – «мозговых центрах».

Институциональные структуры в России традиционно развивались в рамках вузовских и академических институтов. В постсоветские годы произошел как каличественный рост упомянутых структур, так и основание учреждений нового типа. Речь, в частности, идет об имеющих статус общественных организаций анали тических-экспертных учреждениях – «мозговых центрах», которые в основном занимаются имеющими прикладное значение современными проблемами. Армянские научно-аналитические учреждения в России сделают ценные исследования, осуществляют образовательные программы, организуют конференции, семинары, круглые стола, публикуют книги, журналы и т. д. В РФ и на институциональном, и

на индивидуальном уровнях существует значитеьный армянский научный потенциал. В ареале деятельности последнего определенное место занимают стоящие перед армянским сообществом (Армения и Диаспора) современные проблемы и вызовы. Армянские научные учреждения и индивидуальные специалисты РФ поддерживают связы с научно-экспертным сообществом Армении. В качестве основной проблемы можно упомянуть слабая координированность деятельности составляющих армянское научное сообщество индивидуальных специалистов и учреждений.

SCIENTIFIC POTENTIAL OF THE RUSSIAN ARMENIAN COMMUNITY IN THE HUMANITIES FIELD

Vahram Hovyan (RA)

The scientific potential of the Armenian community in Russia, as in the case of the whole Diaspora, is divided into two levels: individual and institutional. The individual level consists of separate specialists of Armenian nationality, acting in various scientific-educational institutions, think tanks, media sphere of the RF. Collectively they are named as scientific-expert community. The institutional level consists of the Armenian scientific-educational establishments (for instance, university centers), analytical and media structures, which are collectively named as centers for Armenian studies.

Among Armenian specialists of the RF in social sciences the professions of economics, history, philosophy, philology, law, psychology and political science prevail. Except of them, there are representatives of sociology, cultural and religious studies. In the RF there are also such specialists of Armenian nationality, who have education in natural sciences (engineering, physical-mathematical sciences, geography, geology etc), but act in analytical structures with political direction – think tanks.

Institutional structures in Russia traditionally developed in the framework of universities and academic establishments. In post-soviet years the mentioned structures have grown numerically, and new institutions have been established as well. It is a matter of, especially,

analytical-expert institutions, having status of NGO, – think tanks, which are mainly engaged in contemporary applied issues. Armenian scientific-analytical institutions in Russia make valuable studies, implement educational programs, organize conferences, workshops, round tables, publish books, periodicals etc.

Both on institutional and individual levels there is significant Armenian scientific potential in the RF. Contemporary problems and challenges ahead the Armenian society (Armenia and Diaspora) have certain place in the area of its activity. The Armenian scientific institutions and individual specialists of the RF have touches with the scientific-expert society of Armenia. The poor coordination of the activity of individual specialists and institutions, constituting the Armenian scientific society, can be mentioned as a main problem.

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ԳԻՏԱԿԱՆ ՆԵՐՈՒԺԸ ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ՈԼՈՐՏՈՒՄ

Վահրամ Հովյան (ՀՀ), քաղաքագիտության մագիստրոս,
«Նորավանք» ԳԿՀ Հայագիտական կենտրոնի ավագ փորձագետ

Ինչպես համայն Սփյուռքի, այնպես էլ Ռուսաստանի հայ համայնքի գիտական ներուժը բաժանվում է երկու մակարդակի՝ անհատական և ինստիտուցիոնալ:[1]

Անհատական մակարդակը կազմում են ՌԴ տարբեր գիտակրթական հաստատություններում, «ուղեղային կենտրոններում», մեդիա ոլորտում գործունեություն ծավալող ազգությամբ հայ անհատ մասնագետները, որոնց հավաքականությունը պայմանականորեն անվանում ենք գիտա-փորձագիտական հանրություն: Ինստիտուցիոնալ մակարդակում գտնվում են հայկական գիտակրթական հաստատությունները (օրինակ՝ համալսարանական կենտրոնները), վերլուծական և մեդիա ոլորտի կառույցները, որոնց ամբողջությունը

[1] Simavoryan, Arestakes and Hovyan, Vahram, Սփյուռքի գիտավերլուծական ներուժի անհատական և ինստիտուցիոնալ մակարդակները (Individual and Institutional Levels of the Diaspora's Scientific and Analytical Potential) (2014). 21st CENTURY journal, N 2, 2014, էջ 78-92:

պայմանականորեն անվանում ենք հայագիտական կենտրոններ։

Անհատական մակարդակ

Նախքան անհատական մակարդակով Ռուսաստանի հայկական գիտա-փորձագիտական հանրության ներկայացումը անհրաժեշտ ենք համարում մի քանի խոսքով անդրադառնալ այդ երկրի հումանիտար ոլորտում գիտական և փորձագիտական կառույցների ներկայիս վիճակին և ազգությամբ հայերի ներկայացվածությանը այդ կառույցների գործունեության մեջ։

Միանգամից նշենք, որ Ռուսաստանում հայ գիտա-փորձագիտական հանրությունը գերակշռաբար ընդգրկված է ակադեմիական կառույցների գործունեության մեջ։ Կիրառական հետազոտություննե- րով զբաղվող «ուղեղային կենտրոններում» ընդգրկված հայերը քանակապես փոքրաթիվ են։ Սույն հանգամանքը ունի մի քանի բացատրություն.

1. Ռուսաստանում ակադեմիական կառույցների թվաքանակը էապես գերազանցում է «ուղեղային կենտրոնների» թվաքանակին։ Եթե ակադեմիական գիտությունը, հետևաբար նաև ակադեմիական կառույցները Ռուսաստանում ունեն դարերի պատմություն, ապա «ուղեղային կենտրոնները» համեմատաբար նոր երևույթ են ինչպես Ռուսաստանի, այնպես էլ հետխորհրդային մյուս երկրների ինտելեկտուալ համակարգում։ Դրանց պատմության սկիզբը վերագրվում է հետխորհրդային շրջանին կամ լավագույն դեպքում՝ Խորհրդային Միության գոյության վերջին շրջանին։
2. Ակադեմիական կառույցները իրենց անձնակազմի թվաքանակով անհամեմատ գերազանցում են «ուղեղային կենտրոններին»։ Եթե «ուղեղային կենտրոնների» աշխատակիցների թվաքանակը հաշվվում է հիմնականում տասնյակներով, ապա ակադեմիական կառույցներինը՝ հարյուրներով և հազարներով։
3. Ակադեմիական կառույցները ավելի բարդ ճյուղավորված համակարգ են, քան «ուղեղային կենտրոնները»։ Օրինակ՝ Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի մեկ ինստիտուտը է մի ամբողջ առանձին ակադեմիական կառույց է։ Նույնը կարելի է ասել նաև առաջատար բուհերի (օրինակ՝ Մոսկվայի պետական համալսարանը) առանձին ֆակուլտետների կամ

ինստիտուտների մասին: Բացի մասնագիտական ճյուղավորումից՝ մեծ դեր է խաղում նաև տարածքային ճյուղավորումը: Ռուսաստանի գլխավոր ակադեմիական կառույցները (Գիտությունների ակադեմիան, Մոսկվայի պետական համալսարանը և այլն) իրենց տեղական մասնաճյուղերն ունեն այդ հսկայական երկրի տարբեր շրջաններում և քաղաքներում:

Այս ամենը, այնուամենայնիվ, չի նշանակում, որ գիտության հումանիտար ճյուղերը ներկայացնող ռուսաստանաբնակ հայերը ընդգրկված են միայն ակադեմիական հետազոտություններում՝ զերծ մնալով կիրառական բնույթի աշխատանքներից: Նախ՝ ժամանակակից աշխարհում տեղի է ունենում ակադեմիական և կիրառական գիտությունների հարաճուն մերձեցում: Աստիճանաբար անգամ ջնջվում են սահմանները կիրառական և ակադեմիական հետազոտությունների միջև, քանի որ դրանք աստիճանաբար դառնում են մեկ համակարգի անբաժանելի մաս՝ փոխադարձաբար պայմանավորելով միմյանց: Ակադեմիական հետազոտությունների արդյունքները ներդրվում և օգտագործվում են կիրառական հետազոտությունների բնագավառում, իսկ կիրառական հետազոտությունների արդյունքները հակադարձ կապի միջոցով հիմք են տեսական-ակադեմիական մշակումների համար: Պատահական չէ, որ ակադեմիական կառույցներում աշխատող գիտնականը ժամանակակից աշխարհում նաև հրատապություն ունեցող կիրառական խնդիրների փորձագետ է՝ համարվելով միաժամանակ և՛ գիտնական, և՛ վերլուծաբան:

Բացի այդ, Ռուսաստանում գործում են պետական կառավարման ինստիտուտներին կից գիտական կառույցներ: Այդպիսիներից նշանավոր են հատկապես ՌԴ նախագահին առընթեր Ժողովրդական տնտեսության և պետական ծառայության ռուսաստանյան ակադեմիան[2], ՌԴ կառավարությանն առընթեր Ֆինանսական համալսարանը[3], Արտաքին գործերի

[2]Российская академия народного хозяйства и государственной службы при президенте Российской Федерации, http://www.ranepa.ru/

[3] Финансовый университет при правительстве Российской Федерации http://www.fa.ru/Pages/home.aspx

նախարարությանն առընթեր Միջազգային հարաբերությունների Մոսկվայի պետական ինստիտուտը (МГИМО)[4] և այլն, որոնք ինչպես մասնագիտական բաժանման, այնպես էլ տարածքային բարդ ճյուղավորում ունեցող հաստատություններ: Վերջիններս չեն կարող լինել զուտ ակադեմիական հետազոտություններով զբաղվող հաստատություններ են: Դրանց առաքելությունը, բացի ակադեմիական հետազոտություններից, պետական կառավարման մարմինների համար կադրերի պատրաստումն է, ինչպես նաև տարատեսակ հետազոտությունների, վերլուծությունների, մշակումների և այլնի միջոցով վերջիններիս գործունեության ինտելեկտուալ ապահովումը: Սույն հանգամանքը հույժ կիրառականություն է հաղորդում հիշյալ կառույցների գործունեությանը՝ միաժամանակ ևս մեկ անգամ փաստելով ակադեմիական և կիրառական գիտությունների մերձեցման մասին:

***

Ռուսաստանի հայության գիտավերլուծական ներուժի մասին խոսելիս նպատակահարմար ենք համարում այն ներկայացնել մի քանի չափորոշիչներով: Խոսքը գիտա-փորձագիտական գործունեության մեջ ընդգրկված հայերի մասնագիտությունների (թե ինչպիսի համամասնություն ունեն առանձին մասնագիտությունների ներկայացուցիչները՝ տնտեսագետները, քաղաքագետները, սոցիոլոգները, պատմաբանները և այլք), գիտական աստիճանների և այլնի մասին է: Նշենք, որ սույն հոդվածի մեջ ներկայացված տվյալները գլխավորապես հիմնված են «Նորավանք» ԳԿՀ-ում 2013-2014 թթ. Իրականացված հետազոտությունների[5] արդյունքների վրա, որոնք հետագայում ենթարկվել են ճշգրտումների և լրացումների: Պարզ է, որ Ռուսաստանում գիտական և փորձագիտական գործունեությամբ զբաղվող հայերի թիվն ավելի է, քան սույն աշխատանքում ներկայացվածը, և ոչ մի գիտական հետազոտություն չի կարող

---

[4] МГИМО университет, http://www.mgimo.ru/

[5] Հարությունյան Գ., Սիմավորյան Ա., Հովյան Վ., Ղանալանյան Տ., Սփյուռքի գիտավերլուծական հանրությունը. կազմակերպչական խնդիրներ և համագործակցության հեռանկարներ, Ե., 2013, էջ 24-106: Սիմավորյան Ա., Հովյան Վ., Ղանալանյան Տ., Արտերկրի հայագիտական կենտրոնները. ներուժի գնահատում, Ե., 2014:

սպառիչ կերպով ցույց տալ այդ մարդկանց իրական թվաքանակը։ Հետևաբար, սույն աշխատանքում ներկայացված տվյալները նույնպես չեն կարող հավակնել սպառիչ լինելուն, և դրանք վերաբերում են միայն սույն հետազոտության շրջանակներում հաշվառված և ուսումնասիրված մարդկանց։ Այնուամենայնիվ, դրանք թեկուզ մոտավոր կերպով կարող են որոշակի լույս սփռել Ռուսաստանի հայ համայնքի գիտա-փորձագիտական հանրույթի և նրա ներուժի վրա։

Արդ, սույն աշխատանքում դիտարկվել է Ռուսաստանում գիտա-փորձագիտական աշխատանքի մեջ ներգրավված շուրջ 300 հայ մասնագետ։ Մասնագիտությունների հարցին անդրադառնալիս նախ արժե նշել, որ գիտա-փորձագիտական աշխատանքով զբաղվողները բնավ պարտադիր չէ, որ ունենան միայն հումանիտար կրթություն։ Այդպիսի գործունեության մեջ կարող են ընդգրկվել նաև բնագիտական կրթություն ունեցող անհատներ։ Ավելին՝ դա երբեմն նպատակահարմար է, քանի որ բնագիտական մտածողությունը հաճախ կարող է օգտակար լինել հասարակական խնդիրների շուրջ վերլուծություններ անելիս։ Բացի այդ, միջգիտակարգային հաջող հետազոտությունների համար գիտության տարբեր ոլորտների գիտելիքների համադրումը կարևոր նախապայման է։

Այսպիսով՝ թեև գիտա-փորձագիտական աշխատանքով զբաղվող ռուսաստանաբնակ հայերի գերակշիռ մեծամասնությունը ունի հումանիտար կրթություն, այնուամենայնիվ, այդպիսի գործունեության ներգրավվածների մեջ կան նաև բնագիտական կրթություն ունեցողներ։ Ընդհանուր առմամբ, եթե փորձենք ներկայացնել հումանիտար և բնագիտական ոլորտների մասնագետների քանակական հարաբերակցությունը, ապա ավելի քան 270 հումանիտար ոլորտի մասնագետների դիմաց առկա է 17 բնագիտական ոլորտի մասնագետ։

Բնագիտական ոլորտը Ռուսաստանի հայ գիտա-փորձագիտական հանրության մոտ ներկայացված է 7 մասնագիտություններով։ Դրանք են՝ ճարտարագիտությունը, ֆիզմաթ գիտությունները, աշխարհագրությունը, երկրաբանությունը, էլեկտրատեխնիկան, կենսաբանությունը և շինարարությունը։ Չորս մասնագիտությունների գծով՝ երկրաբանություն, էլեկտրատեխնիկա, կենսաբանություն և

շինարա- րություն, առկա են մեկական ներկայացուցիչներ։ Բնական գիտությունների ոլորտում գերակշռությունը պատկանում է ճարտարագետներին, ֆիզմաթ գիտությունների և աշխարհագրության ներկայացուցիչներին։ Ճարտարագետների թիվը Ռուսաստանի հայ գիտա-փորձագիտական հանրության շրջանակներում կազմում է 8։ Նրանք, փաստորեն, քանակապես տեսակարար կշռով գտնվում են առաջին տեղում՝ կազմելով բնագիտական մասնագիտություններ ունեցողների գրեթե կեսը։ Երկրորդ և երրորդ տեղերում են գտնվում ֆիզմաթ գիտությունների և աշխարհագրության ներկայացուցիչները, որոնց քանակը կազմում է համապատասխանաբար 3 և 2 (տե՛ս Աղյուսակ 1)։

Աղյուսակ 1. **Բնագիտական մասնագիտություններ ունեցողների քանակը Ռուսաստանի հայ գիտա-փորձագիտական հանրության մեջ։**

	Մասնագիտություն	Քանակ
1	Ճարտարագիտություն	8
2	ֆիզկա-մաթեմատիկական գիտություններ	3
3	աշխարհագրություն	2
4	երկրաբանություն	1
5	էլեկտրատեխնիկա	1
6	կենսաբանություն	1
7	շինարարություն	1
8	*Ընդհանուր*	17

Հումանիտար ոլորտը կազմող մասնագիտությունները Ռուսաստանի հայկական գիտա-փորձագիտական հանրության շրջանում, ըստ ներկայացվածության աստիճանի, նպատակահարմար է բաժանել երկու խմբի՝ առավել և պակաս տարածվածներ։

Առավել տարածվածների շարքին են դասվում այն մասնագիտությունները, որոնց տիրապետողների թվաքանակը գերազանցում է մեկ տասնյակը։ Նշենք, որ մասնագիտությունների գերակշիռ մեծամասնությունը՝ 7-ը, պատկանում է հենց այս խմբին։ Տարածվածության տեսակետից առաջին տեղում է գտնվում տնտեսագիտությունը, որին տիրապետում են Ռուսաստանի

հայկական գիտավերլուծական հանրությունը ներկայացնող 76 անձինք: Դրան հերթականությամբ հաջորդում են պատմությունը (45 մարդ), փիլիսոփայությունը (35 մարդ), բանասիրությունը (32 մարդ), իրավաբանությունը (28 մարդ), հոգեբանությունը (23 մարդ) և քաղաքագիտությունը (14 մարդ):

Օրինակ, Ռուսաստանի նշանավոր հայ տնտեսագետներից է տ.գ.դ., ՌԴ Կառավարությանն առընթեր Ժողովրդական տնտեսության ակադեմիայի ռեկտոր Աբել Աղանբեգյանը[6]: Պատմաբաններից նշանավոր են պ.գ.դ., ՌԳԱ Համընդհանուր պատմության ինստիտուտի տնօրեն Ալեքսանդր Չուբարյանը[7], պ.գ.թ., «Հայազգ» հիմնադրամի նախագահ Սերգեյ Սայադովը[8] և ուրիշներ: Նշանավոր հայ քաղաքագետ է քաղ.գ.դ., Տնտեսագիտության բարձրագույն դպրոցի (Մոսկվա) Համաշխարհային տնտեսության և համաշխարհային քաղաքականության ֆակուլտետի դեկան, «Ռուսաստանը գլոբալ քաղաքականությունում» («Россия в глобальной политике») հանդեսի խմբագրական խորհրդի նախագահ Սերգեյ Կարագանովը[9]: Քաղաքական լրագրության ոլորտում նշանավոր են Մարգարիտա Սիմոնյանը[10] («Russia Today» հեռուստաընկերության գլխավոր խմբագիր), Արմեն Հովհաննիսյանը[11] («Միջազգային կյանք՝ «Международная жизнь» հանդեսի գլխավոր խմբագիր, Ռուսաստանի Արտաքին և պաշտպանական քաղաքականության խորհրդի անդամ):

Պակաս տարածված են համարվում այն մասնագիտությունները, որոնց տիրապետողների թիվը կազմում է մինչև մեկ տասնյակ: Այդպիսի 3 մասնագիտություններից առավել մեծ տարածում ունեն սոցիոլոգիան և մշակութաբանությունը, որոնց տիրապետողների թիվը հասնում է համապատասխանաբար 10-ի և 9-ի: Վերջիններիս հաջորդում է կրոնագիտությունը 1 ցուցիչով (տե՛ս աղյուսակ 2):

---

[6] Տե՛ս http://www.peoples.ru/state/statesmen/aganbegyan/
[7] Տե՛ս http://igh.ru/employees/1?locale=ru
[8] Տե՛ս http://ru.hayazg.info/Саядов_Сергей_Михайлович
[9] Տե՛ս http://karaganov.ru/pages/biography
[10] Տե՛ս https://24smi.org/celebrity/474-margarita-simonyan.html
[11] Տե՛ս http://svop.ru/эксперты/оганесян-армен-гарникович/

Աղյուսակ 2. Հումանիտար մասնագիտություններ ունեցողների քանակը Ռուսաստանի հայ գիտա-փորձագիտական հանրության մեջ:

	Մասնագիտություն	Քանակ
1	Տնտեսագիտություն	76
2	Պատմություն	45
3	Փիլիսոփայություն	35
4	Բանասիրություն	32
5	Իրավաբանություն	28
6	Հոգեբանություն	23
7	Քաղաքագիտություն	14
8	Սոցիոլոգիա	10
9	Մշակութաբանություն	9
10	Կրոնագիտություն	1
	Ընդհանուր	273

Ռուսաստանի հայ գիտա-փորձագիտական հանրության ներուժի մասին պատկերացում կազմելու կարևորագույն չափորոշիչ է նաև գիտական և փորձագիտական աշխատանքով զբաղվողների կրթվածության աստիճանը: Այս տեսակետից ռուսաստանաբնակ հայ մասնագետները բաժանվում են երկու խմբի՝ բարձրագույն գիտական աստիճաններ (գիտությունների թեկնածու կամ դոկտոր) ունեցողներ և չունեցողներ: Երկրորդ խումբը կազմում են այն մասնագետները, որոնք ստացել են բակալավրի, մագիստրոսի կամ խորհրդային շրջանի 5-ամյա բարձրագույն կրթություն: Սույն հետազոտության շրջանակներում հավաքված տվյալ ների դիտարկումը ցույց է տալիս, որ ռուսաստանաբնակ հայ գիտա-փորձագիտական հանրության գերակշիռ մեծամասնությունը ունի բարձրագույն գիտական կոչումներ: Թեկնածուական և դոկտորական ատենախոսություններ պաշտպանած հայ մասնագետների ընդհանուր թիվը կազմում է 268: Մնացած փոքր հատվածը՝ ավելի քան 20 մասնագետ, ունի բակալավրի, մագիստրոսի կամ խորհրդային շրջանի 5-ամյա բարձրագույն կրթություն: Իսկ բարձրագույն գիտական աստիճաններ ունեցողների մեջ որոշակի առավելությամբ առաջին տեղում են գիտությունների դոկտորները (156 մասնագետ): Երկրորդ տեղում գտվող գիտությունների թեկնածուների թվաքանակը հասնում է 112-

ի։

Այսպիսով՝ կարելի է ասել, որ կրթվածության առումով Ռուսաստանի հայ գիտա-փորձագիտական հանրության պատկերը բավականին բարվոք է։ Որքան բարձր է գիտական աստիճանը, այնքան մեծ է դրան տիրապետող հայ մասնագետների քանակը (տե՛ս Աղյուսակ 3)։

Աղյուսակ 3. Ռուսաստանի հայ գիտավերլուծական հանրությունը՝ ըստ գիտական աստիճանների

	Գիտական աստիճանը	Տիրապետողների թվաքանակը
1	Գիտությունների դոկտոր	156
2	Գիտությունների թեկնածու	112
3	Բակալավր, մագիստրոս և 5-ամյա բարձրագույն կրթություն ունեցող	20-ից ավելի

Ռուսաստանի հայ գիտա-փորձագիտական հանրության ներուժը գնահատելիս կարևոր ցուցիչ է նաև այդ հանրույթը ներկայացնող անհատների գործունեության տեղաբաշխվածությունը։ Այստեղ որոշակի տարբերակում է մտցվում Մոսկվայում ու Սանկտ-Պետերբուրգում և Ռուսաստանի այլ շրջաններում ու քաղաքներում ապրող և գործող անձանց միջև։ Մոսկվան և Սանկտ-Պետերբուրգը ավանդաբար եղել են Ռուսաստանի հասարակական-քաղաքական, տնտեսական, մշակութային, գիտակրթական կյանքի խոշորագույն կենտրոնները։ Անգամ Ռուսաստանի սահմանադրությամբ նրանց տրվում է դաշնային նշանակության քաղաքի կարգավիճակ[12], ըստ որի՝ նրանք ՌԴ սուբյեկտներ են։ Հետևաբար, Մոսկվայում և Սանկտ-Պետերբուրգում գտնվող ակադեմիական կառույցները և «ուղեղային կենտրոնները» հարաբերական առավելություն ունեն Ռուսաստանի այլ շրջաններում և քաղաքներում գործող նմանատիպ կառույցների նկատմամբ։ Ռուսաստանի հայ գիտա-

[12] Конституция Российской Федерации, статья 65
http://www.constitution.ru/10003000/10003000-5.htm

փորձագիտական հանրությունը կազմող անհատների գերակշիռ մեծամասնությունը ընդգրկված է Դաշնության խոշորագույն կենտրոններ Մոսկվայի և Սանկտ-Պետերբուրգի ակադեմիական և վերլուծական կառույցների գործունեության մեջ: Սա նույնպես դրական ցուցանիշ է:

Ինստիտուցիոնալ մակարդակ

Ռուսաստանում հայագիտությունն ավանդաբար եղել է զար- գացած գիտաճյուղ: Դրա նկատմամբ հետաքրքրությունն այս երկրում պայմանավորված է մի շարք գործոններով, որպիսիք են հայկական ստվար համայնքի առկայությունը[13], Ռուսաստանի և Հայաստանի միջև ավանդական գիտական և մշակութային կապերը, մեր տարածաշրջանում այդ երկրի ունեցած շահերը:

Ռուսաստանի հայագիտական կենտրոնները կարելի է բաժանել երեք խմբի.

- *Կենտրոններ, որոնք անվանապես չեն համարվում հայագիտական, սակայն դրանցում, ի թիվս այլ հետազոտությունների, իրականացվում են նաև հայագիտական (Հայաստանին և հայությանն առնչվող) հետազոտություններ:* Դրանք հումանիտար ոլորտի գիտակրթական և ակադեմիական կառույցներն են: Այդպիսի կառույց է Սանկտ-Պետերբուրգի պետական համալսարանի Արևելագիտության ֆակուլտետը: Վերջինս 2014 թ. սեպտեմբերի 23-25-ը կազմակերպել է միջազգային գիտաժողով՝ «Հայկական ժառանգության գրավոր հետքերը» խորագրով: Մեկ այլ օրինակ է Մոսկվայի Մ. Վ. Լոմոնոսովի անվան պետական համալսարանի Ասիայի և Աֆրիկայի ինստիտուտը, որտեղ «2012-ից հայոց լեզուն հանդիսանում է պար- տադիր դասավանդվող առարկա՝ որպես առաջին արևելյան լեզու, ինչն ինստիտուտի ղեկավարությունը պայմանավորում է ոչ միայն ռուսաստանաբնակ հայերի, այլև ողջ ռուսաստանյան հասարակության շրջանում հայկական մշակույթի բջիջ ձևավորելու անհրաժեշտությամբ»[14]:

---

[13]Ռուսաստանը արտերկրի ամենահայահոծ երկիրն է: Այստեղ հայերի թվաքանակը, ըստ ոչ պաշտոնական տվյալների, կազմում է մոտ 2.5 մլն: Приветствие Председателя Правительства Российской Федерации Владимира Путина, Четвёртый съезд Союза армян России. http://www.sarinfo.org/sarnews/19-11-10-2.shtml

[14] Саядов С., Арменоведение в России: историографический очерк, Հայագիտական միջազգային

Այս կառույցները չունեն հատուկ հայագիտական ուղղվածություն։ Դրանց հետազոտական ոլորտը՝ պատմություն, արևելագիտություն և այլն, թեմատիկ առումով բավական լայն է ու բազմազան, որն իր մեջ, ի թիվս այլ թեմաների կամ բնագավառների, ընդգրկում է նաև հայագիտական թեմաներ։

- *Գիտակրթական և ակադեմիական կառույցների շրջանակներում գործող հատուկ հայագիտական կենտրոններ։* Այդպիսի կենտրոններից են, օրինակ, Ռուսաստանի Գիտությունների ակադեմիայի Արևելյան ձեռագրերի ինստիտուտի Հայկական ֆոնդը, որտեղ իրա- կանացվում են հայագիտական հետազոտություններ, Ուրալի պետական համալսարանի, Նիժնի Նովգորոդի պետական համալսարանի, Ռյազանի պետական համալսարանի հայագիտական կենտրոնները։ Դրանք հիմնադրվել են ՀՀ դիվանագիտական ջանքերի և Հայաստանի գիտակրթական և ակադեմիական կառույցների արտաքին կապերի ընդլայնման արդյունքում։
- *Գիտակրթական և ակադեմիական կառույցներից դուրս գործող հայագիտական կենտրոններ, որոնք կա՛մ առանձին կառույցներ են, կա՛մ էլ հայկական համայնքային կառույցների մաս են կազմում։* Երկու պարագայում էլ այդ հայագիտական կենտրոնները պատկանում են հայ համայնքին։ Որպես համայնքային կառույց նորագույն շրջանում հիմնադրված հայագիտական կենտրոններ են Հայագիտության կենտրոնը[15], «Time to analyze» կենտրոնը[16], Ռուսաստանի հայերի միության Մոսկվայի միջազգային իրավունքի և քաղաքագիտության հայկական ինստիտուտը։

Թանգարաններն ընդհանրապես ոչ միայն մշակութային, այլև գիտահետազոտական հաստատություններ են։ Նկատի ունենք այն, որ նախ՝ թանգարաններում պահվող իրերն ու առարկաները նյութ են (հաճախ սկզբնաղբյուրային նշանակություն ունեցող) պատմաբանների, մշակութաբանների, արվեստաբանների, ազգագրագետների և այլ գիտաճյուղեր ներկայացնող

երկրորդ համաժողով, «Հայագիտությունը և արդի ժամանակաշրջանի մարտահրավերները», Լիագումար նիստի զեկուցումներ, Ե., 2013, էջ 75։

[15] Центр арменоведения, http://armenology.ru

[16] Time to analyze, http://tta.am

հետազոտողների համար և, ապա՝ այնտեղ իրականացվում են գիտական հետազոտություններ (հաճախ հենց իրենց մասնագիտական աշխատակազմի կողմից)։ Հետևաբար, Ռուսաստանի տարածքում գործող հայկական թանգարանները նույնպես դասվում են այս խմբի հայագիտական կենտրոնների թվին։ Վերջիններիցս նշանավոր են հատկապես Հայ Առաքելական Եկեղեցու Ռուսաստանի և Նոր Նախիջևանի թեմի «Տապան» թանգարանը[17], «Մոսկվայի ազգերի մշակույթի հայկական թանգարանը»[18] և այլն։ Այս խմբին են պատկանում նաև հասարակական կազմակերպությունների կարգավիճակ ունեցող և երկկողմ հիմունքներով ստեղծված հայագիտական կառույցները։ Դրանք իրենց անվան մեջ որպես բաղադրիչ կրում են «ռուս-հայկական» արտահայտությունը։ Այդ կենտրոններն են «Ռուս-հայկական բարեկամություն»-ը (2003 թ.), «Ռուս-հայկական հարաբերությունների զարգացմանն աջակցության տարածաշրջանային հասարակական շարժում»-ը[19] (2010 թ.), «Ռուս-հայկական ռազմավարական և հասարակական նախաձեռնություններին աջակցության կենտրոն»-ը[20] (2012 թ.)[21]։

Այսպիսով, եթե փորձենք դասակարգել Ռուսաստանի հայագիտական կենտրոնները պատկանելության սկզբունքով, ապա դրանք կարելի է բաժանել երեք խմբի.

1. Գիտակրթական և ակադեմիական կառույցների մաս կազմող կենտրոններ, որոնց շարքին են դասվում վերը թվարկված խմբերից առաջին երկուսի մեջ մտնողները։
2. Հայ համայնքին պատկանող կենտրոններ, որոնց շարքին են դասվում վերը թվարկված խմբերից երրորդի մեջ մտնող այն կենտրոնները, որոնք կա՛մ առանձին կառույցներ են, կա՛մ մաս են կազմում ավելի մեծ հայկական համայնքային կառույցների։
3. Հասարակական հիմունքներով ստեղծված կառույցներ, որոնք

---

[17] Տե՛ս Кузнецова Н., Музей «ТАПАН». Ковчег Души и Духа, Ноев Ковчег, №5, май, 2016 г.

[18] Армянский музей Москвы и культуры наций, https://www.armmuseum.ru/

[19] Региональное общественное движение содействия развитию русско-армянских отношений. http://rus-arm.org

[20] Центр поддержки Русско-Армянских стратегических и общественных инициатив. http://russia-armenia.info

[21] Саядов С., նշվ. աշխ., էջ 76։

ունեն երկակի պատկանելություն, պատկանում են հայ համայնքին և տվյալ երկրի քաղաքացիական հասարակությանը։ Ռուսաստանի հայագիտական կենտրոնների գործունեության ուղղություններն են՝ գիտահետազոտական, ուսումնական, հրատարակչական ու գիտաժողովների, աշխատաժողովների, կլոր սեղանների և այլ գիտական հավաքների կազմակերպման։

Գիտահետազոտական ուղղությամբ դրանք իրականացնում են հայագիտական տարատեսակ հետազոտություններ, ուսումնասիրություններ, վերլուծություններ, որոնք արտացոլվում են մենագրությունների, գիտավերլուծական հոդվածների, զեկույցների և այլնի մեջ։ Հայագիտական կենտրոնների գիտահետազոտական գործունեության մասին է վկայում Ռուսաստանի գիտակրթական հաստատությունների շրջանակներում գործող հայագիտական կենտրոններում մագիստրատուրայի և ասպիրանտուրայի առկայությունը։ Սա վկայում է այն մասին, որ իրականացվող գիտահետազոտական աշխատանքներն ամփոփվում են նաև ատենախոսությունների, մագիստրոսական թեզերի մեջ։ Օրինակ՝ Նիժնի Նովգորոդի պետական համալսարանի Միջազգային հարաբերությունների և համաշխարհային պատմության ֆակուլտետի Հայագիտական կենտրոնում 2014 թ. տվյալներով պաշտպանվել է չորս թեկնածուական ատենախոսություն՝ հայագիտական թեմաներով, ամեն տարի կատարվում են մագիստրոսական, դիպլոմային և բակալավրիատի հայագիտական հետազոտություններ։

Ուսումնական գործունեությամբ զբաղվում են հատկապես այն հայագիտական կենտրոնները, որոնք բուհերի կառուցվածքային բաղադրիչներ են։ Օրինակ, նույն Նիժնի Նովգորոդի պետական համալսարանի Հայագիտական կենտրոնում դասավանդվում է հայոց լեզու՝ որպես երկրորդ օտար լեզու, բակալավրիատում և մագիստրատուրայում, ինչպես նաև ֆակուլտատիվ։ Կարդացվում են նաև հանրային դասախոսություններ Հայաստանի պատմության և մշակույթի վերաբերյալ։ Ուսումնական գործունեությունը որոշակիորեն բնորոշ է նաև ժամանակակից կիրառական հետազոտություններով ու վերլուծություններով զբաղվող

հայագիտական կենտրոններին, որոնք նմանվում են «ուղեղային կենտրոնների»: Այսպիսի կենտրոններն իրենց ուսումնական գործունեությունն իրականացնում են ամառային դպրոցների, հատուկ դասընթացների, դասախոսությունների, աշխատաժողովների և այլնի միջոցով:

Գիտաժողովների և այլ գիտական հավաքների կազմակերպման ասպարեզում կազմակերպվում են ինչպես տեղական, այնպես էլ հանրապետական և միջազգային գիտաժողովներ: Վերն արդեն նշվել է 2014թ. սեպտեմբերի 23-25-ը Սանկտ-Պետերբուրգի համալսարանի Արևելագիտության ֆակուլտետի կազմակերպած «Հայկական ժառանգության գրական հուշարձանները» խորագրով միջազգային գիտաժողովի մասին: Նիժնի Նովգորոդի պետական համալսարանի Հայագիտական կենտրոնը կազմակերպել է միջազգային գիտաժողովներ հետևյալ թեմաներով՝ «Հայաստանի Հանրապետության և Սփյուռքի արտաքին քաղաքականության խնդիրներն ու հեռանկարները» (2009 թ.) և «Հայաստանը քաղաքակրթությունների երկխոսությունում» (2011 թ.): Իսկ Ռյազանի պետական համալսարանի Հայագիտական կենտրոնը 2012թ. հոկտեմբերին կազմակերպել է միջազգային գիտագործնական կոնֆերանս՝ «Գիրքը՝ որպես ազգային մշակույթի հիմք. Ռուսաստան-Հայաստան-Եվրոպա» խորագրով[22]:

Ռուսաստանի հայագիտական կենտրոնները հրատարակում են գրքեր, ժողովածուներ և պարբերական հանդեսներ: Դրանց կողմից հրատարակվում են ինչպես անհատական և կոլեկտիվ մենագրություններ, որոնցում ամփոփված են իրականացված հետազոտությունները, այնպես էլ ուսումնական ձեռնարկներ: Օրինակ՝ Նիժնի Նովգորոդի պետական համալսարանի Հայագիտական կենտրոնը հայ-ռուսական հարաբերությունների, Հայաստանի արտաքին քաղաքականության և Մերձավոր Արևելքի հայ համայնքների վերաբերյալ ունի երեք կոլեկտիվ մենագրություն[23]

---

[22] Саядов С., նշվ. աշխ., էջ 76:

[23] Колобов О.А., Корнилов А.А., Симонян А.Г., Российско-армянские отношения. Исторический опыт, стратегические вызовы и перспективы развития. Н. Новгород – Ереван, 2001; Асатрян Ю.С., Колобов О.А., Корнилов А.А., Геополитика Армении на Кавказе: генезис, историческая эволюция, перспективы, Н. Новгород-Саров, 2010; Егиазарян А.О., Корнилов А.А., Армянские

և մեկ անհատական մենագրություն՝ Հայ Առաքելական եկեղեցու վերաբերյալ[24]:Կենտրոնը 2014 թ. հրատարակել է «Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականության ձևավորման գործընթացը» ուսումնամեթոդական ձեռնարկը[25]: Որպես ուսումնական ձեռնարկ նշանավոր է նաև Մոսկվայի պետական լեզվաբանական համալսարանի հրատարակած «Հայոց լեզուն ԱՊՀ երկրների համար» ուսումնական ձեռնարկը[26]: Մոսկվայի միջազգային իրավունքի և քաղաքագիտության հայկական ինստիտուտը 2008 և 2009 թվականներին հրատարակել է Լեռնային Ղարաբաղի հակամարտության միջազգային իրավական և քաղաքական տեսանկյուններին նվիրված երկհատորյա ստվարածավալ աշխատություն[27]:

Հայագիտական կենտրոնները հրատարակում են նաև գիտաժողովների ժամանակ հնչած զեկույցների ժողովածուներ: Նիժնի Նովգորոդի պետական համալսարանի Հայագիտական կենտրոնը, օրինակ, ժողովածուների տեսքով հրատարակել է իր կազմակերպած վերոհիշյալ երկու միջազգային գիտաժողովների նյութերը[28]:

Պարբերական հրատարակություններից նշանավոր են նույն Նիժնի Նովգորոդի պետական համալսարանի Հայագիտական կենտրոնի կողմից 2004թ.-ից հրատարակվող «Նաիրի» տարեգիրքը՝ Հայաստանի և Սփյուռքի մասին, Մոսկվայի միջազգային իրավունքի և քաղաքագիտության հայկական ինստիտուտի բանբերը՝ նվիրված միջազգային քաղաքական և իրավական խնդիրներին և այլն:

Ռուսաստանի հայագիտական կենտրոնների

общины в странах Ближнего Востока: история, идентичность,институты, Н.Новгород: Саров, 2010.

[24] Григорян Л.С., Армянский Иерусалим. Повествование паломников, Н.Новгород: Кварц, 2013.

[25] Корнилов А.А., Коротышев А.П., Сорокин А.С., Процесс формирования внешней политики Республики Армения, Практикум, Нижний Новгород, 2014.

[26] Комарова Р.А. и др., Армянский язык для стран СНГ: учебник, М, 2009.

[27] Нагорный Карабах в международном праве и мировой политике. Документы и комментарий / Сост., отв. ред., авт. вступ. ст. и коммент. д. ю. н., проф. Ю.Г. Барсегов. – В 2 т. – М.: КРУГЪ, 2008. – Т. 1; «Нагорный Карабах в международном праве и мировой политике». Комментарии к документам. Том II / Д. ю. н., проф. Ю.Г. Барсегов; отв. ред. А.О. Меликян – М.: «Мелихово», 2009.

[28] Проблемы и перспективы внешней политики Республики Армении и Спюрка, Материалы международной научной конференции, Нижний Новгород, 2009; Армения в диалоге цивилизаций, Материалы международной научной конференции, 28 апреля 2011 года, Нижний Новгород, 2011.

հետաքրքրության ոլորտում են հետևյալ թեմատիկ բնագավառները՝ հայոց լեզու, հայ գրականություն, հայոց պատմություն, հայ մշակույթ և քաղաքակրթություն, կրոն, ազգագրություն, հայ և ռուս ժողովուրդների պատմական, մշակութային, քաղաքակրթական առնչություններ, Սփյուռք, արդի քաղաքականություն: Հայկական Սփյուռքի թեմատիկայի շրջանակներում հայագիտական կենտրոնների հետազոտությունները կենտրոնանում են ինչպես առհասարակ Սփյուռքի հիմնախնդիրների, այնպես էլ Ռուսաստանի հայ համայնքի ուսումնասիրությունների վրա: Արդի քաղաքականության ասպարեզում հայագիտական կենտրոններին հետաքրքրում են Հայաստանի ներքին և արտաքին քաղաքականությունը, նրա տարածաշրջանային և միջազգային դրությունը, հայ-ռուսական հարաբերությունները և այլն:

Ռուսաստանի հայագիտական կենտրոններն ունեն միմյանց, այլ երկրների և Հայաստանի հայագիտական կենտրոնների (ԵՊՀ, Հայ-ռուսական (Սլավոնական) համալսարան, ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ) հետ համագործակցության որոշակի փորձ[29]:Համագործակցությունն իրականացվում է հրատարակությունների, մասնագետների փոխանակման, դասախոսական և հետազոտական աշխատանքի համար փոխադարձաբար մասնագետներ հրավիրելու, համատեղ գիտաժողովների կազմակերպման, միմյանց գիտաժողովներին մասնակցության և այլ միջոցներով:

Որպես հիմնական խնդիր կարելի է նշել, որ Ռուսաստանում հայագիտական կենտրոնների, ինչպես նաև առանձին հայ գիտնականների գործունեությունն ընդհանուր առմամբ համակարգված չէ: Չկան այդ նպատակով ստեղծված կառույցներ: Չնայած նման կառույցի ստեղծման գաղափարը բավական երկար ժամանակ է, ինչ դրված է շրջանառության մեջ, սակայն գործնական քայլեր կատարելու փորձեր այդ ուղղությամբ արվում են միայն վերջերս: Փորձ է արվում Եվրոպայում գործող Հայկական ուսումնասիրությունների միջազգային ընկերակցության[30] (Շվեյցարիա), Հայագիտական ուսումնասիրությունների

[29] Տե՛ս, օրինակ՝ Саядов С., նշվ. աշխ., էջ 76:
[30] Association Internationale des Etudes Armèniennes (AIEA) http://aiea.fltr.ucl.ac.be/

ընկերակցության[31] (Ֆրանսիա), ԱՄՆ-ում գործող Հայկական հետազոտությունների և ուսումնասիրությունների ազգային ընկերակցության[32] և Հայագիտական ուսումնասիրությունների ընկերակցության[33] օրինակով այստեղ նույնպես ստեղծել հայագիտական կառույցների, ինչպես նաև առանձին հայ գիտնականների գործունեությունը համակարգող ինստիտուցիոնալ մարմին[34]:

Օգտագործված գրականություն

1. Simavoryan, A., Hovyan, V. (2014). Սփյուռքի գիտավերլուծական ներուժի անհատական և ինստիտուցիոնալ մակարդակները (Individual and Institutional Levels of the Diaspora's Scientific and Analytical Potential). *21st CENTURY journal*, (2), 78-92.
2. Հարությունյան, Գ., Սիմավորյան, Ա., Հովյան, Վ., Ղանալանյան, Տ. (2013). Սփյուռքի գիտավերլուծական հանրությունը, կազմակերպչական խնդիրներ և համագործակցության հեռանկարներ. *Երևան,«Նորավանք» ԳԿՀ.*
3. Սիմավորյան, Ա., Հովյան, Վ., Ղանալանյան, Տ. (2014). Արտերկրի հայագիտական կենտրոնները. ներուժի գնահատում. *Երևան,«Նորավանք» ԳԿՀ.*
4. Саядов, С. (2013). Арменоведение в России: историографический очерк. *Հայագիտական միջազգային երկրորդ համաժողով, «Հայագիտությունը և արդի ժամանակաշրջանի մարտահրավերները», Լիագումար նիստի զեկուցումներ*, Ե.
5. Кузнецова Н., Музей «ТАПАН». Ковчег Души и Духа, Ноев Ковчег, №5, май, 2016 г.

---

[31] Société des Etudes Arméniennes (SEA) - www.etudes-armeniennes.org

[32] The National Association for Armenian Studies and Research (NAASR) http://www.naasr.org/

[33]Society for Armenian Studies (SAS), http://societyforarmenianstudies.com/

[34] Մոսկվայում ստեղծվում է «Ռուսաստանի հայագետների ընկերությունը», http://hayernaysor.am/մոսկվայում-ստեղծվում-է-ռուսաստանի-h/

6. Колобов, О. А., Корнилов, А. А., Симонян, А. Г. (2001). Российско-армянские отношения: исторический опыт, стратегические вызовы и перспективы развития. *Нижний Новгород–Ереван*.
7. Асатрян, Ю.С., Колобов, О.А., Корнилов, А.А. (2010). Геополитика Армении на Кавказе: генезис, историческая эволюция, перспективы. Н. Новгород-Саров.
8. Егиазарян, А. О., Корнилов, А. А. (2010). *Армянские общины в странах Ближнего Востока: история, идентичность, институты*. СГТ.
9. Григорян Л.С. (2013). Армянский Иерусалим. Повествование паломников. Н.Новгород: Кварц.
10. Корнилов А.А., Коротышев А.П., Сорокин А.С. Процесс формирования внешней политики Республики Армения. Практикум, Нижний Новгород, 2014.
11. Комарова Р.А. и др., Армянский язык для стран СНГ: учебник, М. 2009.
12. Нагорный Карабах в международном праве и мировой политике. Документы и комментарий / Сост., отв. ред., авт. вступ. ст. и коммент. д. ю. н., проф. Ю.Г. Барсегов. – В 2 т. – М.: КРУГЪ, 2008. – Т. 1.
13. «Нагорный Карабах в международном праве и мировой политике». Комментарии к документам. Том II // Д. ю. н., проф. Ю.Г. Барсегов; отв. ред. А.О. Меликян – М.: «Мелихово», 2009.
14. Проблемы и перспективы внешней политики Республики Армении и Спюрка. *Материалы международной научной конференции*. Нижний Новгород, 2009.
15. Армения в диалоге цивилизаций. *Материалы международной научной конференции*. Нижний Новгород, 2011.